ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների /2018-19 ուստարի, առկա ուսուցում/

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

22.06.2019թ.

2019թ. մայիսին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում առկա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների շրջանում առցանց հարցման միջոցով ուսումնասիրություն է անց կացվել մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ:

Հետազոտությունն իրականացվել է հարցման միջոցով, որը կատարվել է ամփոփիչ ատեստավորման քննություններից հետո, առցանց՝ ԵՊՀ-ի էլեկտրոնային հասցեների միջոցով:

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել շրջանավարտների բավարարվածությունը.

1. կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից,
2. ուսումնակազմակերպչական գործընթացներից.
3. մասնաճյուղի ուսումնառության ռեսուրսներից և համալսարանական միջավայրից,
4. մասնաճյուղում ստացած կրթությունից և այլն:

Հարցումը նպատակ ունի վերհանել մասնաճյուղային **խնդիրներ**, ապա

1. <u>գնահատել</u> շրջանավարտների բավարարվածությունը ուսումնառության ընթացքում ստացած տեսական գիտելիքների մակարդակից, ձեռք բերած գործնական հմտություններից և կարողություններից, պրակտիկաների արդյունավետությունից,
2. <u>գնահատել</u> բավարարվածությունը բուհում գործող գիտելիքների գնահատման համակարգի և ամփոփիչ ատեստավորման (ամփոփիչ քննության, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության) օբյեկտիվությունից,
3. <u>գնահատել</u> բավարարվածությունը ուսումնական ռեսուրսների՝ լսարանների, համակարգչային սրահների, ուսումնական լաբորատորիաների, գրադարանի և ընթերցասրահի առկայությունից, մատչելիությունից, հարմարավետությունից և հագեցվածությունից, համացանցի արագությունից:
4. <u>գնահատել</u> շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղի, ֆակուլտետների ղեկավարությունից, պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողական և այլ կառույցներից,

և գտնել կարևոր խնդիրների համար լուծումներ:

Հարցումը կատարվել է ԵՊՀ-ի կողմից, արդյունքներն ամփոփվել և վերլուծվել են ՄԿՈԱ բաժնի կողմից: Հարցման արդյունքները տրվել են միայն մասնաճյուղի կտրվածքով, և չեն պարունակել մանրամասն արդյունքներ ըստ կրթական ծրագրերի: Այդ պատճառով ներկայացված են վերլուծության ընդհանրական արդյունքներ:

Հարցմանը մասնակցել են մասնաճյուղի 124 շրջանավարտ (շրջանավարտների ընդհանուր քանակը՝ 155, էլեկտրոնային հասցեներով հարցմանը ներգրավվել են 153 ուսանող):

	ԵՊՀ ԻՄ			ԲԳՖ			ԿԱՖ			ՀԳՖ			ՏԳՖ		
Ուս. ձևը	ընդ.	ներ.	մասն.	ընդ.	ներ.	մասն.	ընդ.	ներ.	մասն.	ընդ	ներ.	մասն.	ընդ.	ներ.	մասն.
առկա	155	153	124	32	32	30	16	15	6	74	74	72	33	32	16
		99%	80% /82%		100 %	94% /94%		94%	38% /40%		100 %	97% /97%		97%	48% /50%

Սոցիոլոգիական հետազոտության համար գոյություն ունի վստահելիության մակարդակ հասկացությունը, որը պայմանավորված է հետազոտության մասնակիցների, այսպես կոչված,

ընտրանքային քանակի և ընդհանուր քանակի հարաբերությամբ: Սոցիոլոգիայի համար ստանդարտ և լավ ցուցանիշ է համարվում 95% վստահության մակարդակը՝ 1% -ից մինչև 5% սխալանքով: Սխալանքը ցույց է տալիս արդյունքների նկատմամբ վստահության մակարդակի միջակայքը, օրինակ, եթե վստահության մակարդակը 95% է, իսկ սխալանքը 3%, նշանակում է արդյունքների վստահության մակարդակը կարող է տատանվել 92%-ից մինչև 98%:

Հարցմանը շրջանավարտների մասնակցությունը մասնաճյուղի համար ապահովում է 95% վստահելիության մակարդակ՝ 4% սխալանքով (այսինքն՝ 91%-99%): Առանձին ֆակուլտետների համար 95% վստահելիության մակարդակ պահովվում է միայն Հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ 97% և Բնական գիտությունների ֆակուլտետում՝ 94%:

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածությանը շրջանավարտների տված գնահատականների միջինը տատանվում է 4.1-ից մինչև 4.7 միջակայքում: Այսինքն, կարելի է համարել որ, ընդհանուր հարցման արդյունքները դրական են և գոհացնող: Սակայն նախորդ տարիների համեմատությամբ որոշ գործընթացների համար այն բարելավվել է, որոշների համար գրանցվել է բավարարվածության մակարդակի նվազում:

Հարցման արդյունքների վերլուծությունը ներկայացնենք ըստ առանձին գործընթացների:

1. Շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից

Այս բաժնի հարցերը խմբավորվել են ըստ ուղղությունների և վերլուծվել:

1.1. Մասնաճյուղի ռազմավարական կարևոր նպատակ է **որակյալ կրթության** տրամադրումը, ինչի համար կարևորվում է իրականացվող կրթական ծրագրի բովանդակությունը և նրա շրջանավարտների ձեռքբերումները: Հարցումը հնարավորություն է տալիս շրջանավարտներին գնահատել և իրենց բավարավածությունն արտահայտել մասնաճյուղում ստացած իրենց **գիտելիքների, կարողությունների և հմտությունների** մակարդակից:

Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջանավարտներն ընդհանուր առմամբ բավարարված են իրենց ձեռք բերած կրթական վերջնարդյունքների մակարդակից, որովհետև գնահատականների գերակշիռ մասը կազմում են լավ (4) և գերազանց (5) գնահատականները:



Գծապատկերում ներկայացված արդյունքները վկայում են, որ շրջանավարտները հատկապես բավարարված են իրենց ձեռք բերած.

- տեսական գիտելիքների մակարդակից. հարցվածների **98%**-ը գնահատել է 4 և 5 գնահատականներով, իսկ միջին գնահատականը կազմել է **4.71**,

- մասնագիտական կարողություններից. հարցվածների **96%**-ը գնահատել է 4 և 5 գնահատականներով, իսկ միջին գնահատականը կազմել է **4.56:**

Այս արդյունքները բարձր են նաև նախորդ 5 տարիների արդյունքների համեմատ և էապես բարելավվել են, ընդորում այդ երկու ուղղություններում գրանցվում է մշտական առաջընթաց:





Մասնաճյուղում ուսումնառության բարձր մակարդակի և կրթական ծրագրերի պատշաճ իրականացման գործընթացում կարևորվում է նաև ուսանողների մասնագիտական գրականությունից օգտվելու հնարավորության ապահովումը, ինչը այլ հանգամանքներից բացի էապես և առավելապես կախված է ուսանողների **<u>օտար լեզվի իմացության մակարդակից</u>**: Այն մշտապես անհանգստության տեղիք է տալիս, բարձրաձայնվում է դասախոսների կողմից և նաև հենց իրենց, ուսանողների կողմից: Նրանք ուսումնառության ընթացքում բախվում են լեզվի իմացության խնդրի հետ, սակայն քչերն են այդ խնդրի լուծման մեջ տեսնում իրենց գործոնը: Հարկ է նշել, որ մասնաճյուղը օտար լեզուների համապատասխան մակարդակ ապահովելու համար կազմակերպում է տարբեր դասընթացներ, որոշ կրթական ծրագրերում կամընտրական տարբերակով ավելացվել են օտար լեզվի դասընթացներ, իսկ որոշ մոդուլներ իրականացվում են օտար լեզվով: Այնուամենայնիվ, հարցման արդյունքներով գրանցվել է օտար լեզվի իմացությունից բավարավածության ցածր գնահատական, օտար լեզվի իմացությունից բավարարված են հարցմանը մասնակցած շրջանավարտների **76%-ը** (գնահատել է 4 և 5 գնահատականներով), միջին գնահատականը մոտավորապես հավասար է **4.2**-ի: Այս գնահատականը, ընդհանուր առմամբ, բավարար գնահատական է, սակայն հաշվի առնելով օտար լեզվի կարևորությունը և կիրառումը հայաստանյան աշխատաշուկայում և հատկապես միջազգային աշխատաշուկայում, և համեմատելով այն նախորդ տարիների արդյունքների հետ, կարելի է համարել, որ մասնաճյուղն այս գործընթացում ունի լուծելու կազմակերպական, մոտիվացիոն և ուսումնական շատ խնդիրներ:



Նույն խնդրին ենք բախվում նաև **<u>գործնական հմտությունների</u>** ձևավորման գործընթացում: Տեսական գիտելիքի ամրապնդման ամենաարդյունավետ և մոտիվացիոն միջոցը գործնականորեն դրանց կիրառելն է: Ուսանողի մոտ գիտակցական մակարդակում գործնականում ձեռք բերված կարողություններն ավելի երկար են պահպանվում և ամրապնդում տեսական գիտելիքները, ուսանողին դրանով ներշնչում են վստահություն և հավատ իր ուժերի

նկատմամբ: Ըստ հարցման արդյունքների շրջանավարտների միայն **74%-ն է** գնահատել է 4 և 5 գնահատականներով իր բավարարվածությունը ձեռք բերած գործնական հմտություններից և միջին գնահատականը մոտավորապես հավասար է **4.08**-ի: Ընդորում այդ ցուցանիշը նախորդ տարիների համեմատ նվազել է: Պետք է ենթադրել, որ ուսանողները, հավանաբար, արդեն բավականին ակտիվացված պրակտիկաների ժամանակ բախվում են տեսական իմացությունը գործնականում կիրառելու իրավիճակների հետ և իրենց համար կատարում որոշակի եզրակացություններ: Տարբեր ուսումնասիրությունների միջոցով ՄԿՈԱ բաժինը հավաքագրել է ուսանողների կարծիքներն ու առաջարկները ուսումնառության արդյունավետ կազմակերպման վերաբերյալ, նրանց մեծ մասն առաջարկում են ավելացնել գործնական դասընթացների ժամաքանակը, դասախոսներին առաջարկում են ավելի մեծ ուշադրություն դարձնել կիրառական խնդիրների և իրավիճակային խնդիրների վրա, ավելի շատ հանձնարարել ինքնուրույն հետազոտական աշխատանքներ և այլն:



1.2. Որակյալ կրթության ապահովման անբաժանելի բաղադրիչներն են **<u>մատուցվող դասընթացները և իրականացվող պրակտիկաները:</u>** Շատ կարևոր է, որ այս երկու գործընթացները նպաստեն ուսանողի սովորելու, մասնագետ դառնալու մոտիվացիայի բարձրացմանը: Հետևաբար, կամայական բուհի ղեկավարությանը հետաքրքրում է մատուցվող դասընթացների և իրականացվող պրակտիկաների վերաբերյալ իր ուսանողների և, առանձնահատուկ, իր շրջանավարտների կարծիքը դրանց վերաբերյալ: Հարցմանը մասնակցած շրջանավարտները գնահատել են իրենց բավարարվածությունը ԵՊՀ ԻՄ-ում մատուցված դասընթացներից և իրականացված պրակտիկաներից:

Ուրախությամբ պետք է փաստել, որ շրջանավարտներն իրենց գնահատականներով բարձր կարծիք են արտահայտել մատուցվող դասընթացների վերաբերյալ (միջին գնահատականը՝ **4.53**), և վերջին տարիներին այն բավականին բարելավվել է, այն պայմանավորված է վերջին տարիներին կրթական ծրագրերի ըստ որակավորումների ազգային շրջանակի չափանիշների վերանայման և հստակ կիրառման: 2018-19 ուսումնական տարում շրջանավարտ-ների բավարարվածությունը մատուցվող դասընթացների օգտակարությունից կազմել է **93%**, միջին գնահատականը՝ **4.53**, թեպետ այն ցածր է նախորդ տարվա համեմատ, սակայն լավ արդյունք է:



Վերջին 5 տարիներին շրջանավարտների բավարարվածությունը պրակտիկաների կազմակերպումից դինամիկ կերպով աճել է, ինչն արդեն իսկ ողջունելի է և այս ուստարում այն կազմել է **88%**, միջին գնահատականը՝ **4.51**:



1.3. Ներկայացնենք մասնաճյուղի շրջանավարտների ԵՊՀ ԻՄ-ում ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից բավարավածության **արդյունքները:**

Ուսանողի ձեռքբերումների գնահատումը ուսումնառության ամենակարևոր և միաժամանակ ամենաբարդ գործընթացներից է: Ուսումնառության նկատմամբ վստահության ամրապնդման և փոխադարձ ընկալունակության ապահովման համար դասախոսից պահանջվում է հստակեցնել գնահատման չափանիշները, ունենալ ուսանողի ձեռքբերումների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համապատասխան մեխանիզմներ, և լինել մաքսիմալ օբյեկտիվ գնահատման գործընթացում: Երբեմն օբյեկտիվության վերաբերյալ ուսանողների կարծիքները կարող են պայմանավորված լինել ստացած գնահատականով և գնահատման չափանիշների վերաբերյալ թյուր կարծիքով: Այստեղ կարևորվում է գնահատման գործընթացի նկատմամբ դասախոսի պատասխանատվությունը, նրա գնահատման չափանիշների հստակությունը և դրանց պահպանումը: Նշենք, որ այս առումով մասնաճյուղն ունի մի շարք ձեռնարկումներ, որոնցից մեկը դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) կիրառությունն է ուսումնական գործընթացում: Գնահատման իր ռազմավարությունը և չափանիշները դասախոսը ամրագրում է դասընթացի փաթեթում և որքան դրանք պարզ են և հասկանալի, այնքան գնահատման գործընթացը դառնում է սահուն և միանշանակ, և անհրաժեշտ է, որ դասախոսն ուղղորդվի իր մշակած ռազմավարությամբ:

Հարցմանը մասնակցած շրջանավարտների **90%**-ը 4 և 5 գնահատականներով է արտահայտել իր բավարարվածությունը **գնահատման օբյեկտիվությունից** (միջին գնահատականը՝ **4.3**), իսկ վերջին 5 տարիներին նրանց բավարարվածության գնահատականը տատանվել է մոտավորապես 4.2-4.4 միջակայքում: Որքան էլ զարմանալի է, անգամ գրագողության դեմ պայքարի մեխանիզմների կիրառման և չափանիշների հստակեցման առկայության դեպքում էլ այդ ցուցանիշը զոհացուցիչ չէ:





Շրջանավարտները գնահատականներով իրենց կարծիքն են արտահայտել նաև ավարտական աշխատանքների պաշտպանության օբյեկտիվության (միջին գնահատականը՝ **4.4**) և իրենց գիտական ղեկավարների աշխատանքի (միջին գնահատականը՝ **4.7**) վերաբերյալ:



Հարցմանը մասնակցած շրջանավարտների **92%-ը** 4 և 5 է գնահատել իրենց ավարտական աշխատանքների գիտական ղեկավարների աշխատանքը, իսկ **89%**-ը ամփոփիչ ատեստավորումը համարել է օբյեկտիվ: Վերջին թիվը վկայում է, որ այնուամենայնիվ եղել են իրենց ստացած գնահատականների օբյեկտիվությունից չբավարարված շրջանավարտներ:

Ավարտական աշխատանքների վերաբերյալ նոր մտցրած ցուցանիշը նպատակ ունի պարզելու ուսանողի հետ նրա գիտական ղեկավարի աշխատելու ծանրաբեռնվածության արդարացվածությունը: Հարցմանը մասնակցած 42 ուսանող (124-ից) նշել է, որ ղեկավարն իրեն տրամադրել է 20 ժամից ավել ժամանակ, իսկ 39-ը՝ 10 ժամից պակաս ժամանակ: Ըստ էության մասնակիցների **66%**-ը նշել է, որ իրենց հետ աշխատել են մինչև 20 ժամ, և եթե հաշվի առնենք, որ գիտական ղեկավարների աշխատանքից բավարարված են եղել նրանց 89%-ը, ապա արդյո՞ք այստեղից երևում է, որ դասախոսի 20 ժամ աշխատանքը իսկապես բավարար է հաջողված, արդիական և <u>ինքնուրույն</u> կատարված լավ աշխատանք ունենալու համար:



2. Բավարարվածությունը մասնաճյուղի ռեսուրսներից

Ցանկացած կազմակերպության կարևոր խնդիրներից է աշխատանքային կամ ուսումնական <u>**հարմարավետ ու բավարար միջավայրի ստեղծումը և ապահովումը անհրաժեշտ ռեսուրսներով**</u>: Մեր շրջանավարտները մասնաճյուղի ռեսուրսներից և ծառայություններից հիմնականում բավարարված են, ինչի մասին վկայում են լսարանների վիճակին և կահավորանքին, համակարգչային սրահների մատչելիությանը ու կահավորանքին և համացանցի մատչելիությանը տված նրանց գնահատականները, որոնք ընկած են **4.23-4.59** միջակայքում (79%-ից մինչև 93%):

Այս արդյունքները նույնպես կարելի է համարել բավարար։



Նախորդ տարիների համեմատությամբ հատկապես բարձրացել է լսարանների կահավորումից բավարարվածության գնահատականը.



Շրջանավարտները դժգոհություն են հայտնել միայն գրադարանում ընթերցասրահի և սպասարկման սրահի համատեղության և դրա հետևանքով առկա աղմուկի վերաբերյալ։ Իսկ ընդհանուր առմամբ նրանք բավարված են գրադարանի կահավորանքից (միջին գնահատականը՝ **4.5**), աշխատաժամերից և սպասարկումից (միջին գնահատականը՝ **4.5**), և ինչպես միշտ բավարված չեն գրադարանում առկա մասնագիտական ժամանակակից գրականությունից, այստեղ իր դերակատարումն ունեն մասնաճյուղում իրականացվող մի քանի սպեցիֆիկ կրթական ծրագրերը։



Թվում էր, թե մեր շրջանավարտները պետք է լիարժեք բավարարված լինեին մասնաճյուղի համակարգչային սրահների կահավորումից և մատչելիությունից, եթե հաշվի առնենք, որ մասնաճյուղը բոլոր ֆակուլտետներում ունի ժամանակակից հզոր համակարգիչներով սրահներ (5 սրահ), որոնք ամբողջությամբ ուսանողների տրամադրության տակ են, գործում է **անվճար ինտերնետ կապը**: Սակայն ընդհանուր գնահատականի վրա, ամենայն հավանականությամբ, իրենց ազդեցությունն են թողել Բնական գիտությունների ֆակուլտետի և Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների գնահատականները: Համակարգչային նոր և ծավալուն ծրագրերի կիրառումը «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» , «Քարտեզագրություն և կադաստրային գործ» և «Դիզայն» կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար հանգեցնում է համակարգիչների ծանրաբեռնվածության մեծացմանը, ինչի արդյունքում եղած բնութագրիչներն արդեն չեն բավարարում և առաջ են բերում նաև համացանցի ծանրաբեռնվածություն: Համացանցի մատչելիության գնահատականը վերջին 5 տարիների համար նկատելիորեն իջել է: Նշենք, որ ինտերնետ կապի արագացման ուղղությամբ արդեն քայլեր ձեռնարկվել են և 2 անգամ բարձրացվել է նրա թողունակությունը:

Վերջին 5 տարիների համար շրջանավարտների բավարարվածությունը համակարգչային սրահների կահավորանքից և մատչելիությունից իջել է: Այս արդյունքները վկայում են, որ լուրջ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտություն կա համապատասխան ստորաբաժանումների կողմից՝ պարզելու համար ուսանողների անբավարարավածության պատճառը, այսինքն հասկանալու, թե ի՞նչ գործոն է այստեղ խանգարող դեր խաղում:





Իսկ ուսումնական լաբորատորիաների խնդիրը մշտապես կա և մասնաճյուղին ֆինանսական բավականին միջոցներ են անհրաժեշտ նրանց հագեցվածությունը բարելավելու համար:



3. Բավարարվածությունը համալսարանական միջավայրից

Հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև համալսարանական միջավայրից շրջանավարտների բավարարվածությանը, քանի որ, բազմիցս, թե՛ ուսանողների պնդմամբ, և թե՛ տարբեր ուսումնասիրություններով հիմնավորվել է միջավայրի մեծ ազդեցությունը ուսանողի սովորելու վրա:

Շրջանավարտների կողմից բավականաչափ բարձր է գնահատվել բավարարվածությունը մասնաճյուղի ղեկավարությունից, ֆակուլտետի ղեկավարությունից, դասախոսական կազմից, կարիերայի կենտրոնից և ուսանողական կառույցներից: Չնայած վերջին տարիներին նշվածների համար արդյունքների տատանվող միտումներին, այնուամենայնիվ ապահովվում է բարձր մակարդակ:











Վերջին 2 տարիներին դրական է նաև բավարարվածությունը ուսանողական կառույցներից:

4. Շրջանավարտների գնահատականը մասնաճյուղում ստացած կրթությունից

Հարկ է նշել, որ շրջանավարտների մասնաճյուղում կոռուպցիոն երևույթների նկատմամբ արտահայտած կարծիքի համաձայն նկատվել է վստահության և օբյեկտիվության էական աճ,

ինչը արտահայտված է կոռուպցիոն երեևույթների հետ առնչված շրջանավարտների թվի կտրուկ նվազումով, և այն փոքր է մասնակիցների թվի 1%-ից, այսինքն ընդամենը խոսք է գնում 2 կամ 3 շրջանավարտի մասին: Այստեղ կարծում ենք այլ դատողությունների անհրաժեշտություն չկա:



Այդ ֆոնի վրա կարևորվում է նրանց մասնաճյուղում ստացած իրենց կրթությանը տված գնահատականը՝ **4.59** միջին գնահատական, որը վեջին 5 տարիների համար ամենաբարձրն է: Տարբեր ուսումնասիրություններով ուսանողներից, արտաքին շահակիցներից և նաև հասարակայնության տարբեր խավերից հավաքված կարծիքները մատնանշում են, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը աշխատաշուկային մշտապես տվել է մրցունակ և որակյալ մասնագետներ՝ ի շնորհիվ իր գիտական գործունեության և որակյալ դասախոսական կազմի: Այդ տեսակետը մեկ անգամ ևս հաստատել են ընթացիկ ուստարվա շրջանավարտները:



Վերջին 5 տարիների համար մասնաճյուղում ստացած կրթության ընդհանուր գնահատականը միշտ բարձր է եղել **4.3**-ից: Հատկանշական է, այս ուսումնական տարվա առավել բարձր գնահատականը, ինչը պայմանավորված է մասնաճյուղի մշտապես զարգացող և ակտիվացող գործունեությամբ:

Կարևոր է նաև հետադարձ կապը շրջանավարտների հետ, ինչը կախված է շրջանավարտների տպավորություններով և կարծիքով: Այն հարցին թե արդյո՞ք շրջանավարտները խորհուրդ կտան մերձավորներին, բարեկամներին և ծանոթներին ուսում ստանալ ԵՊՀ ԻՄ-ում, շրջանավրտների **89%**-ը դրական պատասխան է տվել, և վերջին տարիներին այն մշտապես



գերազանցել է 86%-ը: Ինչը կարելի է ասել գոհացնող արդյունք է:

Բավարարվածության քանակական հետազոտության շրջանում տրված 18 հարցերից (ուսումնական պրոցեսի, ռեսուրսների, համալսարանական միջավայրի վերաբերյալ) 2013-2019 ուստարիների համեմատությամբ այս ուսումնական տարվա համար դրական և բացասական տեղաշարժերի տոկոսային հարաբերությունը հավասար է 50%:

5. Շրջանավարտների առաջարկները

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հավատարիմ է իր առաքելությանը և մշտապես բարելավում է իր գործունեությունը՝ զարգացող աշխատաշուկայի պահանջներին համահունչ, պատրաստում է բարձրորակ մասնագետներ: Մասնաճյուղում կարևորվում է ցանկացած առաջարկ, որը նպատակ ունի բարելավել և զարգացնել ուսումնառությունը, համալսարանական միջավայրը, կրթության որակը, ուսանողի մոտիվացիան և այլն: Տարբեր ուսումնասիրությունների արդյունքում մասնաճյուղի գործունեության տարբեր ոլորտների բարելավման համար առաջարկներ են ընդունվել արտաքին շահակիցներից՝ գործատուներից, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից և շրջանավարտներից, և կարևորվել է յուրաքանչյուրի կարծիքը և առաջարկը: Այս հետազոտությունը նույնպես անմասն չի մնացել առաջարկներից:

Ստորև ամփոփ ներկայացված են շրջանավարտների առաջարկները.

- վերանայել պրակտիկաների կազմակերպման ծրագրերը և ձևերը, ավելացնել դրանց քանակը,
- դասընթացները կազմակերպել ավելի հետաքրքիր՝ բանավեճերով և շատ գործնականների ու համակարգչային ներկայացումների կիրառմամբ,
- չկրկնել առարկաների բովանդակությունը և թեթևացնել ոչ մասնագիտական առարկաների անցկացման ձևը,
- վերանայել դասախոսությունների տրման ձևը և ավելացնել մասնագիտական առարկաների դասաժամերը,
- «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրում ավելացնել մանկավարժություն առարկայի ժամերը,
- առավել հետևողական լինել օտար լեզուների իմացությանը և այդ դասընթացների իրականացմանը, կարևորել օտար լեզու առարկան հատկապես մի քանի մասնագիտություններում,
- պահպանել օբյեկտիվություն,
- գրադարանում ավելացնել պատճենող սարքերի քանակը, իսկ ընթերցասրահում պահպանել լռություն:

Շրջանավարտների առաջարկների և գնահատականների միջև կան որոշակի անհամապատասխանություններ, օրինակ, ներկայացված տվյալների համաձայն շրջանավարտների բավարարվածությունը գործնական հմտություններից նվազել էր, իսկ բավարարվածությունը մասնագիտական կարողությունների ձեռքբերումից աճել, սակայն մասնագիտական կարողությունները էապես կախված են գործնական հմտություններից: Ըստ երևույթին նման հակասական արդյունքները պայմանավորված են տարբեր մասնագիտությունների արդյունքներով:

Իսկ վերջին առաջարկից կարելի է եզրակացնել, որ գրադարանում լավ կլինի առանձնացնել սպասարկման սրահը և ընթերցասրահը, ինչի մասին բարձրաձայնվել է նաև ուսանողական հարցումների, կամ ֆոկուս-խմբով հանդիպումների ժամանակ։

Ելնելով վերոնշյալ վերլուծությունից մասնաճյուղի ղեկավարությանը և համապատասխան ստորաբաժանումներին, մասնավորապես դասախոսներին առաջարկում ենք .

- դասընթացի մատուցման ընթացքում առավել մեծ ուշադրություն դարձնել գործնական հմտությունների զարգացմանը,
- բարձրացնել պրակտիկաների արդյունավետությունը և կազմակերպման որակը,
- մասնաճյուղում բարելավել համացանցի մատչելիությունը,
- վերանայել ուսանողների գնահատման մեթոդները։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին